Տ. ՀՈՎՆԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(22 փետրվարի, 2015 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Տէ՛ր, ողորմեաց մեզ՝ զի ի քեզ յուսացաք»
(Եսայի Լ.Գ. 2):

Ահա մեկ շաբաթ անցավ ապաշխարության, պահեցողության, խոկումի եւ աղոթքի այն շրջանից, որ մենք անվանում ենք Մեծ Պահք. դրա առաջին կիրակի օրը փակ խորանի առջեւ, որը խորհրդանշում է կորուսյալ դրախտի իրականությունը, հավաքվեցինք, մեկտեղվեցինք այս նվիրական հարկից ներս, Աստծո հավերժական հայացքի առջեւ՝ աղոթելու եւ ասելու. «Տե՛ր, ողորմի՛ր մեզ, քանզի մենք մեր հույսը դրել ենք քեզ վրա» (Եսայի Լ.Գ. 2): Եսայի մարգարեի խոսքերն այսօր եւս մտաբերում ենք: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու կանոնակարգի համաձայն՝ Մեծի Պահոց երկրորդ կիրակին՝ օրը Բուն Բարեկենդանից հետո նվիրված է Ադամի ու Եւայի՝ դրախտից արտաքսման իրողությանը՝ հիշեցնելով մեզ, որ կար մի ժամանակ, երբ նրանք ապրում ու վայելում էին եդեմական դրախտն ու այն ամենը, ինչ որ Աստված արարել էր նրանց համար: Աստված ստեղծել էր եդեմական ու երանական մի պարտեզ, որտեղ չկար ցավ ու հեծություն, վիշտ եւ հալածանք: Եւ ինչպես սրբազան շարականագիրն է ասում. «Այնտեղ կար միայն Աստծո տեսությունը եւ աստվածային ներկայությունը»: Մարդը վայելում էր Աստծո ներկայությունն ու տեսությունը լիարժեք ու կատարելապես: Սակայն, սիրելինե՛ր, գիտենք, որ արարաչագործության սկզբնական օրերին խաթարվեց մեր մարդկային բնությունը, խեղվեց Աստծո արարչագործության ներդաշնակությունը, խզվեց մարդ-Աստված իրական հաղորդակցությունը, շփոթ տեղի ունեցավ չարի ու բարու միջեւ: Այս ամենի պատճառը մեղքն էր, եւ ինչպես Մեծն Աթանասն է ասում. «Նյութը մուտք գործեց աշխարհ, սկիզբ դրվեց ժամանակի հասկացությանը, եւ մահը տիրապետող դարձավ մեր կյանքում»:

Աստվածաշունչը շատ գեղեցիկ եւ միեւնույն ժամանակ հուզումով է նկարագրում սկզբնական մեղքը: Եդեմական պարտեզում մարդը ձգտեց նմանվել Աստծուն. ահա այս մոլուցքն էր, որ մարդուն դրդեց աստվածային պատվիրանների ոտնահարմանը:

Սիրելիներ՛, բազմիցս ընթերցել ենք, թե ինչպես մեր նախամայրը՝ Եւան, երկխոսության մեջ մտավ չարի հետ, որի հետեւանքով կասկածի սերմերը ցանվեցին իր հոգում: Նա սկսեց կասկածել աստվածային անհուն բարությանը, անսահման գթառատությանն ու ողորմությանը, ինչպես նաեւ Աստծո ստեղծած այն կարգ ու կանոնին, ըստ որի բնակվում եւ գործում էր մարդը: Այդ կասկածամտությունը դրսից էր՝ չարից, եւ այդ կասկածամտությամբ ճաշակելով խորհրդանշական կամ իրական պտղից՝ մեղանչեց Եւան: Մեղանչեց նաեւ Ադամը, սակայն նրա մեղքն այն էր, որ իր կողքին չզգաց Արարչի ներկայությունը. մի պահ կարծեց, թե իր արարքներն Աստված կարող է չտեսնել: Նա արհամարհեց Տիրոջ իրական գոյությունն իր կյանքում, մարդկային միամտությամբ մտածեց, թե Աստված կարող է չնկատել գործած հանցաքը: Թե՛ նախահայրը եւ թե՛ նախամայրը մեղանչեցին՝ յուրաքանչյուրը յուրովի, սակայն երկուսի գործած մեղքն արտահայտվեց միեւնույն արարքով, այն է՝ մոտենալ ծառին եւ քաղել այդ «մահաբեր» պտուղը: Եւ այդ էր աստվածային պատվիրանների ոտնահարումը. երկու տարբեր գործողություններ, երկու տարբեր հոգեմտավոր մոտեցումներ, որոնք նախածնողներին մղեցին միեւնույն արարքին ու մեղքին: Զանազան առիթներով մարդկային հասարակության մեջ հանդիպում ենք դժբախտությունների, ենթարկվում՝ հալածանքների, ապրում՝ վշտերի մեջ. փոխարեն բացատրենք, որ այդ ամենը տեղի է ունենում աստվածային պատվիրանների ոտնահարման արդյունքում, ընդհակառակը՝ դարձյալ կասկածում ենք աստվածային անսահման բարությանը, մեր ծնած չարն ու չարիքը փորձում ենք վերագրել Աստծուն եւ այդ կասկածամտությամբ այսօր եւս բազմաթիվ չար արարքներ են գործվում, բազում դժբախտություններ են պատահում, քանզի դարձյալ կասկածում ենք Տիրոջ անսահման ու անհուն բարությանը: Շատ մեղքեր ենք գործում մարդկային, հոգեմտավոր կարողության սահմաններում եւ դարձյալ կարծում, որ Աստված չկա: Մեղանչում եւ զգում ենք, որ անսահմանորեն մեղավոր ենք, թաքնվում ու խուսափում Աստծուց, եւ այն ճանապարհից, որը տանում է դեպի Երկնավոր Հայր, շուռ ենք գալիս եւ ընտրում զարտուղի տարբեր ճանապարհներ: Մարդկության պատմության արշալույսին տեղի ունեցած այս մեծ ուրերգությունը խաթարեց մեր մարդկային բնությունը, խզեց մարդ-Աստված իրական հարաբերությունը, եւ մարդը ենթարկվեց չար զորությունների հարձակմանը:

Սակայն, սիրելիներ՛, եկեք տեսնենք, թե ի՞նչ անդրադարձ ունեցան մեր նախածնողները, երբ իմացան, որ Աստված գիտի իրենց գործած մեղքի մասին: Արարիչն իջավ դրախտ, հարցրեց Ադամին. «Ո՞ր ես» (Ծննդ. Գ. 9): Անշուշտ, Աստված գիտեր, թե որտեղ է նա թաքնվել: Այդ հարցումով Աստված ակնկա-

լում էր Ադամի անկեղծ զղջումը: Արդյոք մեր նախածնողները մոտեցա՞ն Աստծուն, ներկայացա՞ն Նրան՝ խնդրելով Բարձրյալի ներումը, ապավինելով Նրա անսահման բարությանն ու ողորմածությանը, քանզի Աստված արդարությամբ չի դատում, այլ քավում է Իր գթությամբ: Ընդհակառակը, ինչպես Սուրբ Գիրքն է ասում, թաքնվեցին՝ մտածելով, թե կարող են խուսափել իրենց մեղավոր լինելու զգացումից եւ մեղքից:

Այսօր էլ բազմաթիվ մեղքեր ենք գործում, սիրելինե՛ր, եւ կարծում, որ Աստված կարող է չտեսնել, եւ մեր մեղքերն այնքան փոքր են, այնքան աննշան, որ Աստծո տեսությանը կարող են չարժանանալ, սակայն մոռանում ենք, որ Տերն ամենուր է եւ ամենից առաջ Նա բնակվում է մեր մեջ: Յուրաքանչյուրիս խիղճը, իբրեւ դատավոր, մեզ ամենայն ժամ հիշեցնում, մեզ հետ խոսում եւ ասում է՝ մեղավոր ենք, մեղք գործեցինք:

Աստված երկրորդ անգամ հարցրեց Ադամին՝ ի՞նչ արեցիր: Տերը դարձյալ ակնկալում էր Ադամի անկեղծ զղջումը: Սակայն Ադամը ի՞նչ պատասխանեց... իր մեղքը բարդեց միակ ընկերոջ՝ կողակցի վրա: Մեզանից քչերն են, որ փնտրում են մեղքի սկզբնապատճառն իրենց մեջ: Սիրելինե՛ր, տեսե՛ք, թե որքան հար ու նման ենք մեր նախածնողներին՝ թե՛ մեղանչելու եւ թե՛ չքմեղանալու առումով: Մեծի Պահոց այս շրջանը հնարավորություն են ընձեռում մուտք գործելու հոգեւոր այն բուժարան, ուր սպեղանի ու դեղ կարող ենք դնել մեր հոգիների վրա, քանի որ ինչպես մարմինը կարիք ունի բուժման, այնպես եւ հոգին՝ սրբվելու եւ մաքրվելու:

Եկե՛ք, միասնաբար մո՛ւտք գործենք այդ բուժարանը՝ մաքրելու եւ սրբելու մեր հոգիները, որ մաքրված ու սրբված կանգնենք Տիրոջ առջեւ՝ կրկնելով Եսայի մարգարեի խոսքերը. «Տե՛ր, ուրմի՛ր մեզ, քանզի մենք մեր հույսը դրել ենք քեզ վրա» այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն: